

տպուած են նաեւ գրքիս մէջ, եր. 60 (1) : Եթէ ճիշտ են այս գրամները, կրնայ ըլլալ որ անոնց մէկ մասն իր տակաւին կիպրոս գտնուած ժամանակ եւ իր կողմէ կարգուած խնամակալներու միջոցով տպուած ըլլան :

Այս գրամներուն տեսակներն են՝ արծաթ, արծաթապղինձ եւ պղինձ . ոսկի գրամ չէ գտնուած մինչեւ հիմա, եւ հաւանական է որ չէ ալ տպած :

Գրքիս 60-րդ երեսը տպուած գրամներէն թիւ 1 կը ներկայացնէ արծաթապղինձ մը, որուն ա կողմը գրուած է՝ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ԷԱՅ Է ԿՈՂՄԸ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ :

Թ. 2 եւ 3՝ արծաթ են . ա կողմը՝ ԼԵՒՈՆ ԱԳԱՒՈՐ ՀԱՅ եւ ք կողմը՝ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ս :

Թ. 4՝ արծաթապղինձ է . ա կողմը՝ ԼԵՒՈՆ ԹԱԳ եւ ք կողմը՝ ԱՒՈՐ ՀԱՅՈՅ :

Թ. 5՝ նոյնպէս արծաթապղինձ . ա կողմը՝ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ եւ ք կողմը՝ ԿԱՐՈՂՈՒԹԵՆ, ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻՍԻԹԱՐԵԱՆԵՅ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԵՋ ԿԱՅ ՕՐԻՆԱԿ ՄԸ, որուն վրայ գրուած է՝ ԿԱՐՈՂՈՒԹԵՆ ԱՍ(տուծոյ) :

Թ. 6՝ պղինձ . ա կողմը՝ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ եւ ք կողմը՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱ . . . :

Թ. 7՝ պղինձ . ա կողմը՝ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ եւ ք կողմը՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ :

Թ. 8՝ պղինձ . ա կողմը՝ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒ եւ ք կողմը՝ ՔԱՂԱՔ :



ԻԶ

Զինանշանք, կնիք եւ անոնագիր ԼԵՒՈՆԻ

Լերկայ աշխատութեանս 75-րդ երեսը գրուած պատկեր մը ցոյց կուտայ, թէ ի՞նչ ձեւ կը կրէին ԼԵՒՈՆԻ զինանշանները Մաղրիզի եւ Պարիսի մէջ : Մաղրիզի յատուկ զինանշանները փորագրել տուած է ԼԵՒՈՆ իր տանուտիրութեան ժամանակ գործածած

(1) Այսեղ շնորհակալութիւն կը յայտնեմ Վեր. հ. Վարդան Վ. Մել-փիսեղեկեանի, որ հաճեցաւ Վիեննայի Միսիթարեանց Թանգարանին նոյն հաւաքածուէն հ. Սիպիլեանի կողմէ ԼԵՒՈՆ Ե-ի ընծայուած գրամներուն կաղապարներն ու պատկերները ղրկել ինձ :